

Տ. ՏԱԹԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱՐԻԲՅԱՆ

Ծնվել է 1937 թ. Սիրիայի Հալեպ քաղաքում վեյթունցի ծնողներից: Ավագանի անունը եղել է Հովհաննես: Նախնական և միջնակարգ կրթությունն ստացել է Հալեպի Հիսուսյան հայրերի վարժարանում: Ուսումնառության մի քանի տարիների ակամա ընդմիջումից հետո, հոգևորական դառնալու կոչումը նրան տանում է Երուսաղեմի հայոց վանք: Այստեղ նա ընդունվում է Սրբոց Հակոբյանց Ժառանգավորաց վարժարան, որտեղ կանոնավոր կերպով հետևելով ընծայարանի ուսումնական ծրագրին և հաջողությամբ ավարտելով այն՝ 1963 թվականին, ձեռամբ Երուսաղեմի հայոց Ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարքի, ձեռնադրվում է կուսակրոն քահանա՝ վերանվանվելով Տ. Տաթև աբեղա:

1963—1966 թվականներին Տ. Տաթև աբեղան մեծ եռանդով և ձեռնհասությամբ վարում է Ժառանգավորաց վարժարանի և Ընծայարանի փոխտեսչի պատասխանատու պաշտոնը: Ապա Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակ Տ. Բաբկեն արքեպ. Ապատյանի կողմից հրավիրվում է Արգենտինա՝ ծառայելու որպես Կորդոբայի հայոց հոգևոր հովիվ: Այստեղ, տասնչորս տարի անընդմեջ, երիտասարդ հայր սուրբը ունենում է եկեղեցական, ազգային, կրթական ու վարչական արդյունավետ գործունեություն: 1975 թ. հայրապետական պատվիրակ Տ. Բաբկեն սրբազանի ձեռամբ ստանում է ծայրագույն վարդապետական աստիճան:

1980 թ. բրազիլահայ թեմի ազգային իշխանության հրավերով և Ամենայն Հայոց Հայրապետի հավանությամբ, Տ. Տաթև ծայրագույն վարդապետը մեկնում է Սան-Պաուլո, որտեղ լծվում է թեմի կազմակերպման աշխատանքներին: Բրազիլահայ թեմական

ժողովը, գնահատելով նրա եռանդուն ծառայությունը և վարչա-կազմակերպչական կարողությունները, 1982 թ. դեկտեմբերին նրան ընտրում է առաջնորդ նորակազմ բրազիլահայ թեմի: Ամենայն Հայոց կաթողիկոսը հաստատում է նրա ընտրությունը:

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը, ընդառաջելով բրազիլահայ թեմի ազգային իշխանությանց պաշտոնական դիմումին, 1984 թ. հոկտեմբերի 14-ին, կիրակի օրը, Ս. Էջմիածնի Մայր տաճարում նրան ձեռնադրում է եպիսկոպոս բրազիլահայ թեմի վրա, իբրև առաջին թեմական առաջնորդ: